



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

No. 612 - 16/2

18 հավելյալ 2018

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 464-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2018 թվականի մայիսի 11-ի «Գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու վերաբերյալ եզրակացություն տվող հանձնաժողովի գործունեության կարգը հաստատելու մասին» N 464-Ա/2 հրամանի հավելվածում՝

1) 9-րդ կետում «հունիսի 1-ը» բառերը փոխարինել «հունիսի 25-ը» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 13.1 կետ.

«13.1 Գերակայություն ճանաչված յուրաքանչյուր ոլորտի մասնագիտություններով նշանակալի նվաճում է համարվում քաղաքացու՝ աշխարհի լավագույն բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական վարկանիշավորման <http://www.shanghai ranking.com/#> կայքի տվյալ տարվա ցանկերի առաջին հինգ տասնյակում ընդգրկված հաստատություններ բակալավրի (դիպլոմավորված մասնագետի, ինտեգրացված), մագիստրատուրայի և ասպիրանտուրայի կրթական ծրագրերով սովորելու կամ դիմորդ հանդիսանալու հանգամանքը՝ ուսման և կացության

համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրների (scholarship) վերաբերյալ փաստաթղթերի առկայությամբ:».

3) 15-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«15. Սույն կարգի 14-րդ կետով սահմանված նշանակալի նվաճումները հանձնաժողովի կողմից հաշվարկվում են բալային միավորների համակարգով՝ առավելագույնը 100 բալային միավորի սահմանաչափով, նշանակալի նվաճումների ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանության հիման վրա՝ համաձայն Ձևի: Հարցազրույցի արդյունքում հանձնաժողովի վերջնական գնահատականը ձևավորվում է բոլոր անդամների գնահատականների միջին թվաբանական գումարով: Հարցազրույցին քաղաքացին մոտիվացիոն ելույթ է ունենում, որի ընթացքում ներկայացնում է մասնագիտական հետաքրքրություններն ու հեռանկարները, ինչպես նաև ուսումը շարունակելու նպատակահարմարությունը, մասնագիտական գործունեության օգտավետությունը, որի վերաբերյալ հանձնաժողովի անդամները կարող են հարցեր տալ: Մոտիվացիոն ելույթը չպետք է գերազանցի 5 րոպեն՝ հանձնաժողովի անդամները հնարավորություն կունենան ծանոթանալ քաղաքացու փաստաթղթերի փաթեթին:

Հարցազրույցի գնահատում

Հարցազրույցի արդյունքները գնահատվում են հանձնաժողովի անդամների կողմից՝ հետևյալ չափանիշներով՝ վերլուծական կարողություններ, մոտիվացիա:

Չափանիշ	Առավելագույն միավոր	
	Մագ.	Ասպ.
Վերլուծական կարողություն	10	10
Մոտիվացիա	10	10
Ընդհանուր	20	20

»:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

X

